



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ/ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

<<12>> հոկտեմբեր 2020թվական

N 18-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ/ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 166-Ն որոշման N1 հավելվածի 4-րդ կետը և 4-րդ աղյուսակի 15-րդ կետը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի /Վաղ./ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան/Վաղ./ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

1. Ախվերդյան Օնիկ
2. Ավետիսյան Աղվան
3. Գալստյան Տիգրան
4. Կարապետյան Լևոն
5. Կարապետյան Հայկ
6. Հարությունյան Դավիթ
7. Հովսեփյան Ռշտունի
8. Սմոյան Սմո
9. Քամայան Էդգար

	կողմ՝9	դեմ՝0	ծեռնապահ՝0
1. Ախվերդյան Օնիկ		-----	-----
2. Ավետիսյան Աղվան		-----	-----
3. Գալստյան Տիգրան		-----	-----
4. Կարապետյան Լևոն		-----	-----
5. Կարապետյան Հայկ		-----	-----
6. Հարությունյան Դավիթ		-----	-----
7. Հովսեփյան Ռշտունի		-----	-----
8. Սմոյան Սմո		-----	-----
9. Քամայան Էդգար		-----	-----

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Գ. ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվականի հոկտեմբերի «12»  
Բաղրամյան/Վաղ./ համայնք

ՀԱԿԵԼԿԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ(ՎԱՂՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 18-Ն ՈՐՈՇԱՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԿԱՏԱՐԿԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

1. <<Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ>> /նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված ֆինանսական փոխհատուցում/ եկամուտ նախատեսել 2297800 ՀՀ դրամ և նախատեսել՝

1.1. 01/1/1 խումբ ենթախմբի 4112 հոդվածին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝  Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Նախագծի անվանումից «18» օգոստոս 2020 թվական» բառերն անհրաժեշտ է հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
2	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան (Վաղ.) համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
3	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Ներկայացված նախագծում «Նախագիծ» բառն անհրաժեշտ է նշել վերևի աջ անկյունում՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ իրավական ակտերի նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում պետք է գրվի «ՆԱԽԱԳԻԾ» բառը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
4	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները, առաջարկում ենք Նախագծի անվանումը ներկայացնել նորմատիվ իրավական ակտերի վավերապայմաններին ներկայացվող պահանջներին համապատասխան, մասնավորապես անհրաժեշտ է նշել «Որոշում» բառը, և ընդունվող իրավական ակտի բնույթը:	Ընդունելի գիտություն	Որոշումը կազմվում է նշված պահանջներին համապատասխան

5	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Նախագծին կից ներկայացված Հավելվածն անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակի տեսքով՝ նկատի ունենալով Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին):	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
6	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Նախագծի 1-ին կետից և Հավելվածից անհրաժեշտ է հանել «հատվածներ» և «հատված» բառերը:	չի ընդունվել	Հատվածները փոփոխվող իրավական ակտի մաս են կազմում և չեն կարող հեռացվել
7	Մարիամ Խաչատրյան 11.09.2020թ.	Նախագծի հիմնավորման վերաբերյալ հայտնում ենք, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը: Այնինչ, տվյալ պարագայում նախագծին կից ներկայացված հիմնավորումը թերի է և չի արտացոլում բյուջեում կատարվող փոփոխությունների անհրաժեշտությունը և բուն էությունը: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի հիմնավորումն անհրաժեշտ է լրամշակել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ